## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 ՀՈՒՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 130-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է.*

1.Ապարան համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 30-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

(զեկուցող՝ Կ.Եղիազարյան)

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը, թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

(զեկուցող՝ Ա.Կարապետյան)

3. Ապարան համայնքի ավագանու 22.03.2019 թվականի № 25-Ա, 22.04.2024թ. № 54-Ա, 19.03.2026թ. №42-Ա, 19.03.2024թ. №34-Ա, 21.06.2019թ. №34-Ա և 23.06.2026թ. №107-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին

(զեկուցող՝ Ա.Կարապետյան)

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին

(զեկուցող՝ Ա.Կարապետյան)

5. Ապարան համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտներն ու ծախսերն ավելացնելու և «Ապարան համայնքի 2026 թ բյուջեն հաստատելու մասին» ավագանու 26.12.2025 թ N 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելի մասին

(զեկուցող՝ Ս.Շերիկյան)

Ավագանի՝ (Կողմ - 11), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Սահակյան Հովհաննես
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Երեմյան Աղվան
Մխիթարյան Վարդան
Գեղամյան Խաչիկ
Կարապետյան Արտյոմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ**
**ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 ՀՈՒՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 131-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ 1-ին մասի 15-րդ, 28-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենգրքի 62-րդ հոդվածի «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

1.Ստեղծել՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային հիմնարկ (այսուհետ՝ հիմնարկ):
2.Հաստատել՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի:
3.Հաստատել հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 2-ի
4. Ընդունել ի գիտություն, որ հիմնարկի գործունեությունը սկսվում է 2026թ հուլիսի 1-ից:
5. Համայնքի ղեկավարին՝ ապահովել հիմնարկի կանոնադրության հաշվառումն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
6. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ - 11), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Սահակյան Հովհաննես
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Երեմյան Աղվան
Մխիթարյան Վարդան
Գեղամյան Խաչիկ
Կարապետյան Արտյոմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

*Հավելված 1*
*Հաստատված է*
*Ապարան համայնքի ավագանու*
*2026 թվականի հունիսի 30-ի №131-Ա որոշմամբ*

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

### 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1.«Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային հիմնարկը (այսուհետ՝ հիմնարկ) Ապարանի համայնքապետարանի կազմում գործող՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային հիմնարկ է:

2.Հիմնարկի հիմնադիրն Ապարան համայնքն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարան համայնքի ավագանու(այսուհետ՝ հիմնադիր):

3.Հիմնարկն իր գործունեության ընթացում ղեկավարվում է Հայաստանի հանրապետության Սահմանադրությամբ,օրենքներով,այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

4.Հիմնադրի և հիմնարկի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապեպտության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

5.Հիմնարկի անվանումն է՝

1)հայերեն լրիվ՝ Հայաստանի հանրապետության Արագածոտնի մարզի <<Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն>> համայնքային հիմնարկ.

2)ռուսերեն լրիվ <<Коммунальное хозяйство общины Апаран>>՝ Муниципальное учреждение, Арагацотнский марз Республики Армения

3)անգլերեն լրիվ Aparan Community Public Utilities", Municipal Institution, Aragatsotn Province, Republic of Armenia.

4)հայերեն կրճատ՝ <<Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն>> ՀՀ

5)ռուսերեն կրճատ՝ <<Коммунальное хозяйство общины Апарана>>՝ ОУ.

6)անգլերեն կրճատ՝ "Aparan Community Public Utilities" MI

6.Հիմնարկի գտնվելու վայրն է՝Հայաստանի Հանրապետություն,Արագածոտնի մարզ, ք. Ապարան,Բաղրամյան 26

### II.ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

7.Հիմնարկի գործունության հիմնական նպատակն Ապարան համայնքի տարածքի աղբահանության, սանիտարական մաքրման, գիշերային լուսավորության (ներառյալ՝ձմեռային ամիսներին)աշխատանքների իրականացման ապահովումն է:

8.Հիմնարկի հիմնական խնդիրներն են՝

1)աղբահանության և սանիտարական մաքրման(ներառյալ՝ձմեռային ամիսներին)աշխատանքների պարտադիր և պարբերաբար իրականացումը.

2)մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը.

3)բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը,աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկվածության ապաովումը.
4)բնակչությունից և իրավաբանական անձանցից աղբահանության պայմանագրերի կնքման և վարձավճարների գանձման աշխատանքների ապահովումը.

5) Ապարան համայնքի տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող օբյեկտների (հանգստի գոտիների, ճանապարհների, կամուրջների, սելավատարների, ջրմուղ-կոյուղի, գիշերային լուսավորություն աղբատեղիներ) շահագործում ու խնամք.
6)Կորդինացնում է գերեզմանատների գործունեությունը և շահագործումը, հուղարկավորությունների կազմակերպման աշխատանքները, հետևում է համայնքի սանիտարական մաքրման, համայնքի տարածում պատշաճ վիճակի ապահովումը, շաբաթօրյակների կազմակերպումը

## III.ՀԻՄՆԱՐԿԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

9.Հիմնարկի իրավունակությունը ծագում է նրա կանոնադրության հաստատման մասին հիմնադրի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:
10.Հիմնարկի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
11.Հիմնարկն իր հիմնադրի անունից,սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակին համապատասխան, կարող է ունենալ քաղաքացիական իրավունքներ և կրել այդ գործունեության հետ կապված քաղաքացիական պարտականություններ:
12.Հիմնարկին պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրա պաշտպանության իրավունքը,հիմնարկն իրականացնում է հիմնադրի հայեցողությամբ՝ նրա անունից:
13.Հիմնարկն ունի անվանում,հիմնադրի կողմից իրեն անհատույց օգտագործման իրավունքով հանձնված գույք, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կլոր կնիք,դրոշմակնիք:Հիմնարկն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով:
14.Հիմնարկն օրենքի սահմաններում՝սույն կանոնադրությամբ նախատեսված ոլորտների և խնդիրների իրականացման համար հիմնադրի անունից իրավունք ունի՝
1)ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ,կրելու պարտականություններ.
2)դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող.
3)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելու պայմանագրեր և կրելու պարտավորություններ:
15.Հիմնարկի իրավունքները կարող են սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում և սահմանված կարգով,ինչպես նաև հիմնադրի որոշմամբ:
16.Հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում հիմնադիրը՝ օրենքով սահմանված կարգով:
17.Հիմնարկը պարտավոր է՝
1)օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական և ֆինանսական հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ.
2)ապահովել կազմակերպության փաստաթղթերի(կազմակերպության կանոնադրություն,ներքին փաստաթղթեր,տարեկան հաշվետվություններ,հաշվապահական և ֆինանսական հաշվառման փաստաթղթեր,յառավարման մարմինների նիստերի արձանագրություններ,օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված ակլ փաստաթղթեր)պահպանումը:

## IV.ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

18.Հիմնարկի կառավարումն իրականացվում է Ապարան համայնքի ղեկավարը (այսուհետ՝ լիազոր մարմին): Լիազոր մարմնին է պատկանում հիմնարկի կառավարման և գործունեության վերաբերյալ ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:

19.Հիմնարկի հիմնադրի լիազորություններն են՝

1)հիմնարկի կառուցվածքի, աշխատակիցների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանումը.

2) հիմնարկի գործունեության դադարման մասին որոշման ընդունումը.

3) հիմնարկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների ու լրացումների կատարումը:

20. Լիազոր մարմինը՝

1) հաստատում է հիմնարկի պահպանման ծախսերի տարեկան նախահաշիվը,

2) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է հիմնարկի տնօրենին.

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

21. Հիմնարկի տնօրենը՝

1) գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն կանոնադրության, հիմնադրի, լիազոր մարմնի կողմից տրված հանձնարարականների համաձայն,

2) հաշվետու է հիմնադրին և լիազոր մարմնին.

3) պատասխանատու է հիմնարկի գործունեության համար.

4) չի կարող զբաղեցնել այլ վճարովի պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.

5) լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Ապարան համայնքին պատճառած վնասի համար: Հիմնարկի տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար,

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ տնօրինում է հիմնարկի գույքը (այդ թվում՝ ֆինանսական միջոցները), գործարքներ է կնքում հիմնադրի անունից

7) ներկայացնում է հիմնարկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

8) գործում է առանց լիազորագրի,

9) տալիս է հիմնարկի անունից հանդես գալու լիազորագրեր.

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային).

11) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը.

12) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում հիմնարկի աշխատողներին.

13) հիմնարկի աշխատողների նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

14) արձակում է աշխատանքային իրավահարաբերություններից բխող հրամաններ հիմնարկի աշխատողներին արձակուրդ տրամադրելու (հետ կանչելու), նրանց գործուղումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում իր գործուղումների վերաբերյալ,

15) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

## V. ՀԻՄՆԱՐԿԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

22. Հիմնարկը չունի հիմնադրից առանձնացված գույք: Հիմնարկի գույքը սեփականության իրավունքով պատկանում է հիմնադրին:

23. Հիմնարկի գույքային իրավունքների օբյեկտներն են՝

1) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները

2) աշխատանքները և ծառայությունները.

3) տեղեկատվությունը.

4) ոչ նյութական բարիքները:

24. Հիմնարկի տիրապետմանն ու օգտագործմանը կարող է պատկանել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել հիմնարկին:

25. Հիմնարկի գույքը գտնվում է Ապարան համայնքի պաշտպանության ներքո:

## VI. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

26. Հիմնարկի գործունեությունը կարող է դադարել միայն հիմնադրի որոշմամբ:

27. Հիմնարկի հիմնադիրը կազմակերպության գործունեության դադարման մասին որոշմամբ նաև նշանակում է լուծարային հանձնաժողով, սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Հիմնարկի լուծարման ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսվանից:

28. Հիմնարկի գործունեությունը համարվում է դադարած՝ հիմնադրի սահմանած օրվանից:

Հավելված N 2
Ապարան համայնքի ավագանու
30.06.2026թ N131-Ա որոշման

**«ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ 2026 Թ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ**

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Թվա-քան ակ | Հաստի-քային միավոր | Դրույքա-չափ /Դրամ/ | Հաստիքա-վճար /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 370.000 | 370.000 |
| 2 | Տնօրենի տեղակալ, գլխավոր ճարտարագետ | 1 | 1 | 310.000 | 310.000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 1 | 290.000 | 290.000 |
| 4 | Պահեստապետ-գերեզմանատան պատասխանատու | 1 | 1 | 160.000 | 160.000 |
| 5 | Տեխնիկաների և տրանսպորտի պատասխանատու | 1 | 1 | 220.000 | 220.000 |
| 6-8 | Շահառուների հետ աշխատանքի մասնագետ-վերահսկիչ | 3 | 3 | 180.000 | 540.000 |
| 9-10 | Օպերատոր | 2 | 2 | 170.000 | 340.000 |
| 11 | Ավտովարորդ-մեխանիկ | 1 | 1 | 200.000 | 200.000 |
| 12-13 | Պահակ | 2 | 2 | 105.000 | 210.000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 13 | 13 | | 2.640.000 |
| | ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ | | | | |
| 14 | Տեղամասի պետ | 1 | 1 | 270.000 | 270.000 |
| 15 | Աշխդեկ | 1 | 1 | 240.000 | 240.000 |
| 16-17 | Աղբահավաք ավտոմեքենայի վարորդ /Ապարան | 2 | 2 | 240.000 | 480.000 |
| 17-19 | Աղբահավաք ավտոմեքենայի բանվոր /Ապարան | 2 | 2 | 215.000 | 430.000 |
| 20-21 | Աղբահավաք ավտոմեքենայի վարորդ /Արագած | 2 | 2 | 240.000 | 480.000 |
| 22-23 | Աղբահավաք ավտոմեքենայի բանվոր /Արագած | 2 | 2 | 215.000 | 430.000 |
| 25-26 | Էքսկավատոր Ջի Սի Պի վարորդ | 2 | 2 | 500.000 | 1.000.000 |
| 27 | Գրեյդերավար | 1 | 1 | 230.000 | 230.000 |
| 28-29 | Բազմաֆունկցիոնալ սանմաքրման ավտոմեքենա | 2 | 2 | 330.000 | 660.000 |
| 30-49 | Սանմաքրման բանվոր | 20 | 20 | 210.000 | 4.200.000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 36 | 36 | | 8.420.000 |
| | ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ | | | | |
| 50 | Տեղամասի պետ | 1 | 1 | 270.000 | 270.000 |
| 51 | Էքսկավատորավար | 1 | 1 | 170.000 | 170.000 |
| 52 | Կոյուղու ավտոմեքենայի վարորդ | 1 | 1 | 180.000 | 180.000 |
| 53 | Կոյուղուղագործ բանվոր | 1 | 1 | 180.000 | 180.000 |
| 54 | Եռակցող/զոդող | 1 | 1 | 210.000 | 210.000 |
| 55 | Եռակցման բանվոր | 1 | 1 | 200.000 | 200.000 |
| 56-79 | Խմելու ջրի փականագործ-հսկիչ | 24 | 21,6 | 120.000 | 2.592.000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 30 | 27,6 | | 3.802.000 |
| | ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ | | | | |
| 80 | Տեղամասի պետ | 1 | 1 | 270.000 | 270.000 |
| 81 | Աշխդեկ | 1 | 1 | 240.000 | 240.000 |
| 82 | Ավտոամբարձիչավար | 1 | 1 | 280.000 | 280.000 |
| 83-85 | Էլեկտրիկ | 3 | 3 | 250.000 | 750.000 |
| 86-89 | Բանվոր | 4 | 4 | 210.000 | 840.000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 10 | 10 | | 2.380.000 |
| | Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ը՝ | 89 | 86,6 | | 17.242.000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Ի.Թադևոսյան

Հավելված 2/1
Ապարան համայնքի ավագանու
30.06.2026թ N131-Ա որոշման

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Ժամկետ /ամիս/ | Թվա-քանակ | Հաստիք միավոր | Դրույքա չափ ՀՀ դրամ | Ամսական վճար ՀՀ դրամ | Ընդամենը 2-րդ կիսամյակում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բուլդոզերավար-տրակտորիստ /դեկտեմբեր/ | 1 | 26 | 24,95 | 160.000 | 3.992.000 | 3.992.000 |
| 2 | Բուլդոզերավար՝ /աղբավայրի մաքրում/ | 6 | 1 | 1 | 160.000 | 160.000 | 960.000 |
| 3 | Գյուղերում աղբահանության ավտովարորդ /վարձակալած ավտոմեքենայով/ | 6 | 4 | 4 | 190.000 | 760.000 | 4.560.000 |
| 4 | Գյուղերում աղբահանության բանվոր | 6 | 4 | 4 | 180.000 | 720.000 | 4.320.000 |
| 5 | Բեռնատար ավտոմեքենայի վարորդ /վարձակալությամբ/ | 6 | 1 | 1 | 210.000 | 210.000 | 1.260.000 |
| 6 | Գոգաւն աղբյուրի պահակ-հավաքարար | 4 | 1 | 0,5 | 106.000 | 53.000 | 212.000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | 37 | 35,45 | | 5.685.000 | 15.304.000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Ի.Թադևոսյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 2/3
Ապարան համայնքի ավագանու
30.06.2026թ N131-Ա որոշման

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱՐԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ 2026 Թ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՀՍԿԻՉՆԵՐԻ

| Հ/Հ | Բնակավայրի անվանումը | Թվա-քանակ | Հաստիքա յին միավոր | Դրույքաչափ /ՀՀ դրամ | Հաստիքա-վճար /ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Արագած | 1 | 1 | 120.000 | 120.000 |
| 2 | Վարդենիս | 1 | 0,75 | 120.000 | 90.000 |
| 3 | Լուսագյուղ | 1 | 1 | 120.000 | 120.000 |
| 4 | Սարալանջ | 1 | 0,75 | 120.000 | 90.000 |
| 5 | Կայք | 1 | 1 | 120.000 | 120.000 |
| 6 | Չքնաղ | 1 | 0,75 | 120.000 | 90.000 |
| 7 | Ձորագլուխ | 1 | 0,85 | 120.000 | 102.000 |
| 8 | Թթուջուր | 1 | 0,75 | 120.000 | 90.000 |
| 9-10 | Նիգավան | 2 | 1,75 | 120.000 | 210.000 |
| 11 | Մելիքգյուղ | 1 | 1 | 120.000 | 120.000 |
| 12 | Արայի | 1 | 1 | 120.000 | 120.000 |
| 13 | Ափնագյուղ | 1 | 1 | 120.000 | 120.000 |
| 14 | Ջրամբար | 1 | 0,75 | 120.000 | 90.000 |
| 15 | Եղիպատրուշ | 1 | 1 | 120.000 | 120.000 |
| 16 | Երնջատափ | 1 | 1 | 120.000 | 120.000 |
| 17 | Շողակն | 1 | 0,75 | 120.000 | 90.000 |
| 18-19 | Շենավան | 2 | 1,5 | 120.000 | 180.000 |
| 20-21 | Հարթավան | 2 | 2 | 120.000 | 240.000 |
| 22 | Ծաղկաշեն | 1 | 1 | 120.000 | 120.000 |
| 23 | Վարդենուտ | 1 | 1 | 120.000 | 120.000 |
| 24 | Քուչակ | 1 | 1 | 120.000 | 120.000 |
| | Ընդամենը՝ | 24 | 21,6 | 120.000 | 2.592.000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Ի.Թադևոսյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 2/4
Ապարան համայնքի ավագանու
30.06.2026թ N131-Ա որոշման

# «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ 2026 Թ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՁՆԻՑ ՄԱՔՐՈՂ ԲՈՒԼԴՈԶԵՐԱՎԱՐՆԵՐԻ

| h/h | Բնակավայր | Թվաքանակ | Հաստիք միավոր | Դրույքա-չափ /ՀՀ դրամ | Հաստիքա-վճար /ՀՀ դրամ | Ժամանակահատվածը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ժամկետ | ամիսներ |
| 1-2 | Ապարան | 2 | 2,5 | 160.000 | 400.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 3-5 | Արագած | 3 | 3,75 | 160.000 | 600.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 6 | Նիգավան | 1 | 1 | 160.000 | 160.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 7 | Լուսագյուղ | 1 | 1 | 160.000 | 160.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 8 | Սարալանջ | 1 | 0,75 | 160.000 | 120.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 9 | Կայք | 1 | 1 | 160.000 | 160.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 10 | Չքնաղ | 1 | 0,75 | 160.000 | 120.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 11 | Ձորագլուխ | 1 | 0,75 | 160.000 | 120.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 12 | Թթուջուր | 1 | 0,75 | 160.000 | 120.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 13 | Վարդենիս | 1 | 1 | 160.000 | 160.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 14 | Շենավան | 1 | 1 | 160.000 | 160.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 15 | Արայի | 1 | 0,85 | 160.000 | 136.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 16 | Ափնա | 1 | 0,85 | 160.000 | 136.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 17 | Ջրամբար | 1 | 0,75 | 160.000 | 120.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 18 | Եղիպատրուշ | 1 | 1 | 160.000 | 160.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 19 | Երնջատափ | 1 | 1 | 160.000 | 160.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 20 | Շողակն | 1 | 0,75 | 160.000 | 120.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 21 | Հարթավան | 1 | 1 | 160.000 | 160.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 22 | Ծաղկաշեն | 1 | 1 | 160.000 | 160.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 23 | Վարդենուտ | 1 | 1 | 160.000 | 160.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 24-25 | Քուչակ | 2 | 1,5 | 160.000 | 240.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| 26 | Մելիքգյուղ | 1 | 1 | 160.000 | 160.000 | 1 ամիս | դեկտեմբեր |
| | Ընդամենը՝ | 26 | 24,95 | 160.000 | 3.992.000 | | |

Աշխատակազմի քարտուղար Ի.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 30 ՀՈՒՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 132-Ա

### ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.03.2019 ԹՎԱԿԱՆԻ № 25-Ա, 22.04.2024թ. № 54-Ա, 19.03.2026թ. №42-Ա, 19.03.2024թ. №34-Ա, 21.06.2019թ. №34-Ա ԵՎ 23.06.2026թ. №107-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարանի համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային հիմնարկի ստեղծվելու հանգամանքը և Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է

1. Ապարան համայնքի ավագանու 22.03.2019 թվականի № 25-Ա, 22.04.2024թ. № 54-Ա, 19.03.2026թ. №42-Ա, 19.03.2024թ. №34-Ա, 21.06.2019թ. №34-Ա և 23.06.2026թ. №107-Ա որոշումներում կատարել փոփոխություն և ,,Ապարանի կոմունալ ծառայության,, ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման և շահագործման նպատակով հանձնված տեխնիկաները և տրանսպորտային միջոցը հանձնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային հիմնարկին՝ անհատույց օգտագործման և շահագործման նպատակով:
2. Հանձնարարել՝«Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային հիմնարկի տնօրենին՝ ա/ սահմանված կարգով գույքն ընդունել հիմնարկի հաշվեկշիռ, կատարել փաստաթղթային անհրաժեշտ ձևակերպումները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ - 12), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Սահակյան Հովհաննես
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Երեմյան Աղվան
Մխիթարյան Վարդան
Գեղամյան Խաչիկ
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Կարեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 30 ՀՈՒՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 133-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով,

Ապարան համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի գործունեությունը 2026 թվականի հուլիսի 7-ից ժամանակավորապես դադարեցնել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ - 12), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Սահակյան Հովհաննես
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Երեմյան Աղվան
Մխիթարյան Վարդան
Գեղամյան Խաչիկ
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Կարեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 30 ՀՈՒՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 134-Ն

### ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ՈՒ ԾԱԽՍԵՐՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՎԱԳԱՆՈՒ 26.12.2025 Թ N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջների, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների դրույթներով և հաշվի առնելով Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն բյուջատային հիմնարկի ստեղծման հանգամանքը և Ապարան համայնքի Ապարան քաղաքի ասֆալտապատման աշխատանքների համար տրամադրված 78302.1 հq.դրամ սուբվենցիան, Ապարան համայնքի բյուջեում կատարել նախահաշվային փոփոխություններ:

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի 2026թ բյուջեի եկամուտներում ու ծախսերում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1Վարչական բյուջեի ծախսային մասում կատարել ավելացում 200000.0 հազ դրամ Կոմունալ տնտեսություն բյուջետային հիմնարկ բնագավառում՝ համաձայն հավելվածների:

1.2 Վարչական բյուջեի ծախսային մասում կատարել պակասեցում 200000.0 հազ դրամով Կոմունալ ծառայություն ՀՈԱԿ բնագավառի 4239 հոդվածից:

1.3 Ապարան համայնքի 2026թ. Ֆոնդային բյուջեի եկամուտներն ու ծախսերն ավելացնել 78302.1 հq. դրամով՝ համաձայն հավելվածների:

2.<<Ապարան համայնքի 2026 թ. բյուջեն հաստատելու մասին>> Ապարան համայնքի ավագանու 26.12.2025 թվականի N 194-Ն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ կետերի աղյուսակներում կատարել համապատասխան լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն N 1, 2, 3, 4 հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ - 12), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Սահակյան Հովհաննես
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Երեմյան Աղվան
Մխիթարյան Վարդան
Դեղամյան Խաչիկ
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Կարեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**Հավելված N1**
**Ապարան համայնքի ավագանու**
**30.06.2026թ. Թիվ 134-Ն որոշման**

«ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26.12.2025Թ. N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ
N1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

| Տողի N | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝ | | 78302.1 | 0.0 | 78302.1 |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260), այդ թվում՝ | 7300 | 78302.1 | 0.0 | 78302.1 |
| 1260 | 2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1261 + տող 1262), այդ թվում՝ | 7332 | 78302.1 | x | 78302.1 |
| 1261 | ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 78302.1 | x | 78302.1 |

**Աշխատակազմի քարտուղար՝** **Ի.Թադևոսյան**

*05028552*

Հավելված N2
Ապարան համայնքի ավագանու
30.06.2026թ. Թիվ 134-Ն որոշման

«ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26.12.2025Թ. N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ
N2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7+ս.8) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100) | 78302.1 | 0.0 | 78302.1 |
| 2400 | 4 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2410 + տող 2420 + տող 2430 + տող 2440 + տող 2450+տող 2460 + տող 2470 + տող 2480 + տող 2490), այդ թվում՝ | 78302.1 | 0.0 | 78302.1 |
| 2450 | 4 | 5 | 0 | Տրանսպորտ, որից՝ | 78302.1 | 0.0 | 78302.1 |
| 2451 | 4 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 78302.1 | 0.0 | 78302.1 |

Աշխատակազմի քարտուղար՝ Ի.Թադևոսյան

Հավելված N3
Ապարան համայնքի ավագանու
30.06.2026թ. Թիվ 134-Ն որոշման

# «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26.12.2025Թ. N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ N3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 4050 + տող 5000 + տող 6000) այդ թվում՝ | | 78302.1 | 0.0 | 78302.1 |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող 4100 + տող 4200 + տող 4300 + տող 4400 + տող 4500 + տող 4600 + տող 4700) այդ թվում՝ | x | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4100 | 1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող 4110 + տող 4120 + տող 4130) այդ թվում՝ | x | 125000.0 | 125000.0 | 0.0 |
| 4110 | ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ (տող 4111 + տող 4112 + տող 4114) որից՝ | x | 125000.0 | 125000.0 | x |
| 4111 | - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 115000.0 | 115000.0 | x |
| 4112 | - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 4112 | 10000.0 | 10000.0 | x |
| 4200 | 1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4210 + տող 4220 + տող 4230 + տող 4240 + տող 4250 + տող 4260), այդ թվում՝ | x | 75000.0 | 75000.0 | x |
| 4210 | ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ (տող 4211 + տող 4212 + տող 4213 + տող 4214 + տող 4215 + տող 4216 + տող 4217), որից՝ | x | 970.0 | 970.0 | x |
| 4214 | - Կապի ծառայություններ | 4214 | 40.0 | 40.0 | x |
| 4215 | - Ապահովագրական ծախսեր | 4215 | 80.0 | 80.0 | x |
| 4216 | - Գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | 850.0 | 850.0 | x |
| 4230 | ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4231 + տող 4232 + տող 4233 + տող 4234 + տող 4235 + տող 4236 + տող 4237 + տող 4238), որից՝ | x | 1800.0 | 1800.0 | x |
| 4232 | - Համակարգչային ծառայություններ | 4232 | 1000.0 | 1000.0 | x |
| 4238 | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 800.0 | 800.0 | x |
| 4240 | ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4241), որից՝ | x | 565.0 | 565.0 | x |
| 4241 | - Մասնագիտական ծառայություններ | 4241 | 565.0 | 565.0 | x |
| 4250 | ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր) (տող 4251 + տող 4252), որից՝ | x | 12000.0 | 12000.0 | x |
| 4252 | - Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 12000.0 | 12000.0 | x |
| 4260 | ՆՅՈՒԹԵՐ (տող 4261 + տող 4262 + տող 4263 + տող 4264 + տող 4265 + տող 4266 + տող 4267 + տող 4268), որից՝ | x | 59665.0 | 59665.0 | x |
| 4261 | - Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 1665.0 | 1665.0 | x |
| 4264 | - Տրանսպորտային նյութեր | 4264 | 38000.0 | 38000.0 | x |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4267 | - Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 20000.0 | 20000.0 | x |
| 4530 | ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (տող 4531 + տող 4532 + տող 4533), որից՝ | x | -200000.0 | -200000.0 | x |
| 4531 | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | -200000.0 | -200000.0 | x |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող 5100 + տող 5200 + տող 5300 + տող 5400), այդ թվում՝ | x | 78302.1 | x | 78302.1 |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5110 + տող 5120 + տող 5130), այդ թվում՝ | x | 78302.1 | x | 78302.1 |
| 5110 | ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 5111 + տող 5112 + տող 5113), որից՝ | x | 78302.1 | x | 78302.1 |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 78302.1 | x | 78302.1 |

**Աշխատակազմի քարտուղար՝ Ի.Թադևոսյան**

**Հավելված N4**
**Ապարան համայնքի ավագանու**
**30.06.2026թ. Թիվ 134-Ն որոշման**

## «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26.12.2025Թ. N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ N6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Տնտեսա-գիտական դասակար գ-ման հոդված | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + | | 78302.1 | 0.0 | 78302.1 |
| 2400 | 4 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2410 + տող 2420 + տող 2430 + տող 2440 + տող 2450+տող | | 78302.1 | 0.0 | 78302.1 |
| 2450 | 4 | 5 | 0 | Տրանսպորտ, որից՝ | | 78302.1 | 0.0 | 78302.1 |
| 2451 | 4 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | | 78302.1 | 0.0 | 78302.1 |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 78302.1 | 0.0 | 78302.1 |
| 2600 | 6 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 3610 + տող 3620 + տող 3630 + տող 3640 + տող 3650 + տող 3660), այդ թվում՝ | | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2660 | 6 | 6 | 0 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝ | | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2661 | 6 | 6 | 1 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 100000.0 | 100000.0 | 0.0 |
| | | | | - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 4112 | 10000.0 | 10000.0 | 0.0 |
| | | | | - Կապի ծառայություններ | 4214 | 40.0 | 40.0 | 0.0 |
| | | | | - Ապահովագրական ծախսեր | 4215 | 80.0 | 80.0 | 0.0 |
| | | | | Գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | 850.0 | 850.0 | 0.0 |
| | | | | Համակարգչային ծառայություններ | 4232 | 1000.0 | 1000.0 | |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 800.0 | 800.0 | 0.0 |
| | | | | Մասնագիտական ծառայություններ | 4241 | 565.0 | 565.0 | |
| | | | | - Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 12000.0 | 12000.0 | 0.0 |
| | | | | - Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 1665.0 | 1665.0 | 0.0 |
| | | | | - Տրանսպորտային նյութեր | 4264 | 38000.0 | 38000.0 | 0.0 |
| | | | | - Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 20000.0 | 20000.0 | 0.0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | -200000.0 | -200000.0 | 0.0 |

**Աշխատակազմի քարտուղար՝** **Ի.Թադևոսյան**